զմեզ, որպէս արար և առնէ: Որպէս հրամայէր Մովսէսի իջանել ի լեռնէն, իբրև ի վարդապետէ և ի Թագաւորէ լուսաւորեալ ոգւով. և Հին մատանափոր տառիւ, երթալ առ Ահարոն սուրբ քահանայապետն ուրախութեամբ և ցնծութեամբ:

Վասն որո յերթալն նորա լերինքն ցընծային, այսինքն արքայն և եկեղեցին. և բըլուրքն խայտային, ազատքն և իշխանքն. և գետքն ծափս հարկանէին՝ հաւատապետքն և հովիւքն: Եւ ի հասանելն նորա ի գաւառս իւր, ելանէր Ահարոն [1] ընդ առաջ նորա հանդերձ բազում կրաւնաւորաւք՝ եպիսկոպոսիւք և քահանայիւք, և համբուրէին զնա իբրև զնոյն ինքն զՔրիստոս, և կամ զաշակերտս նորա: Եւ տեսանէին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի, և հաւատային տեսլեան նորա, և ընդունէին զմատեանն Սողոմոնի զոր էր փոխեալ բանիւ և գրով: Եւ ընթերցեալ՝ բերկրէին, խաղային, խայտային, խնդային և ի ձայն մեծ գոհութիւն ի բարձունս վեր առաքէին տըւողին զանեղծական պարգևսն. և պար առեալ՝

---

1. Կոր. «Ազդ չինէր թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարազունն աւագանոյն ամբոխ, ի քաղաքէն եկեալ պատանէին երանելոյն զախառք Ռաէ զետոյն»: